Հանրային Լողավազանների Վերաբացման Արձանագրություն

Վերջին Թարմացումները. (Փոփոխությունները նշված են դեղին գույնով)

2/17/21.

- Բացօթյա լողավազանները կարող են բաց լինել առօրյա օգտագործման համար, այն պայմանով, որ բոլոր աշխատակիցները և լողավազանից օգտվողները պետք է վեց ոտնաչափ ֆիզիկական հեռավորություն պահպանեն իրենց ընտանիքի անդամ չհանդիսացող անձանցից, ինչպես նաև աշխատակիցներն ու լողավազանից օգտվողները պետք է դիմակ կրեն, երբ լողավազանում չեն:
- Փակ լողավազանները կարող են բաց լինել միայն խեղդվելու կանխարգելման և ջրային բուժման (ջրաբուժություն, լողավազանային բուժում) դասընթացների համար:

Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջապահության Վարչությունը (Հանրային Առողջապահություն) կոչ է անում հանրությանը, բոլոր բիզնես-սեփականատերերին, համայնքային կազմակերպություններին և բնակիչներին՝ աջակցելու բիզնեսների, ժամանցային զբաղմունքների և հանրային վայրերի ապահով վերաբացմանը՝ հավելումն սույն Արձանագրության մեջ տեղ գտած պահանջների՝ Պատանիների և Մեծահասակների Ժամանցային Սպորտի Արձանագրությունը, որը վերաբերում է լողին, կարելի է գտնել հետևյալ հղումով՝ http://publichealth.lacounty.gov/media/Coronavirus/docs/protocols/Reopening_SportsLeagues.pdf: Հանրային լողավազանները ներառում են ճամբարային լողավազանները, ակումբների լողավազանները, առևտրային (commercial) լողավազանները, բուժական կամ ֆիթնես ակումբները, հյուրանոցների լողավազանները, օրվա խնամքի արտոնագրված լողավազանները, հանքային ջրերի լողավազանները, մոթելների լողավազանները, քաղաքային լողավազանները, հանրային կամ մասնավոր դպրոցների լողավազանները, հանգստի կամ շարժական տնակների կայանատեղերի լողավազանները, առողջարանային լողավազանները, հատուկ նշանակության լողավազանները և լողի դպրոցների լողավազանները:

Տաք լոգարանների/ջակուզիների/սպա լողավազանները, ջրային զբոսայգիները և ցայտող ջրավազանները, որոնք գտնվում են զվարճանքի այգիներում, պետք է շարունակեն մնալ փակ, մինչև կթույլատրվի վերսկսել դրանց վերափոխված կամ ամբողջական գործունեությունը:

Բացօթյա լողավազանները թույլատրվում է լինել բաց առօրյա օգտագործման համար, ինչպես նաև խեղդվելու կանխարգելման դասընթացներին զուգահեռ՝ ներառյալ լողի դասընթացները հավաստագրված մարզիչների հետ և ջրային բուժման (ջրաբուժություն, լողավազանային բուժում) դասընթացները:

Փակ լողավազանները կարող են բաց լինել միայն խեղդվելու կանխարգելման դասընթացների համար՝ ներառյալ լողի դասընթացները հավաստագրված մարզիչների հետ և ջրային բուժման (ջրաբուժություն, լողավազանային բուժում) դասընթացները:

Լողավազաններում ջրային սահահարթակները, նավարկություններն ու այլ ջրային ատրակցիոնները պետք է լինեն փակ:

Կասեցված է այլևս կիրառելի չէ

Հաջորդող արձանագրություններում <<ընտանիք>> եզրույթը սահմանվում է՝ որպես <<անձինք, որոնք ապրում են միասին՝ որպես մեկ ընտանեկան միավոր>> և չպետք է ներառի հիմնավորված խմբերի կացության հաստատություններ՝ ինչպիսիք են հանրակացարանները, եղբայրական համայնքները, կանանց համայնքները, մենաստանները, կուսանոցները կամ բնակելի խնամքի հաստատությունները, ինչպես նաև չպետք է ներառի այնպիսի առևտրային կացության հաստատություններ՝ ինչպիսիք են օթևանները, հյուրանոցները և մոթելները:[1] <<Անձնակազմ>> և <<աշխատակից>> եզրույթները ներառում են աշխատակիցներին, կամավորներին, պրակտիկանտներին և փործնակներին (ստաժորներ), սովորողներին և մյուս բոլոր անհատներին, որոնք աշխատանք են կատարում հաստատության տարածքում: <<Այցելուներ>> կամ <<հաճախորդներ>> եզրույթները պետք է ընկալվեն որպես հանրության անդամներ, կամ այլոք, որոնք անձնակազմի անդամներ կամ աշխատակիցներ չեն, որոնք ժամանակ են անցկացնում բիզնեսի կամ հաստատության տարածքում: <<Շենք>>, <<հաստատություն>> և <<շինություն>> եզրույթները վերաբերում են շինությանը, տարածքներին և ցանկացած հարակից շենքերին կամ շինություններին, որոնց տարածքում իրականացվում է թույլատրված գործունեություն:

Քաղաքային լողավազաններից (օրինակ՝ բնակարանային լողավազաններ, անկողին ու նախաճաշ տրամադրող հյուրատների լողավազաններ, համատիրությունների լողավազաններ, սեփականատերերի ասոցիացիայի լողավազաններ) պահանջվում է հետևել Համատեղ Բնակության Հաստատությունների Լողավազանների Վերաբացման արձանագրություններին:

Հանրային լողավազանների բոլոր օպերատորները, որոնց վերաբերում է այս ուղեցույցը, պետք է իրականացնեն ստորև ներկայացված բոլոր կիրառելի միջոցառումները և պետք է պատրաստ լինեն բացատրելու, թե ինչու որևէ չիրականացված միջոցառում կիրառելի չէ իրենց համար:

Խնդրում ենք նկատի ունենալ, որ լրացուցիչ տեղեկությունների և ռեսուրսների հասանելի դառնալու հետ կապված սույն փաստաթուղթը կարող է վերանայվել, այդ պատճառով անհրաժեշտ է կանոնավոր կերպով ստուգել Լոս Անջելես Շրջանի կայքը http://www.ph.lacounty.gov/media/Coronavirus/ այս և այլ փաստաթղթերի վերանայումների հետ ծանոթանալու համար:

Այս ցանկն ընդգրկում է.

(1) Աշխատակիցների առողջությունը պահպանելու նպատակով աշխատավայրի կանոնավորություն և գործելակերպ
(2) Ֆիզիկական հեռավորություն ապահովող միջոցառումներ
(3) Վարակի վերահսկողություն ապահովող միջոցառումներ
(4) Հաղորդակցությունը աշխատակիցների և հանրության հետ
(5) Կարևորագույն ծառայություններին անաչառ հասանելիություն ապահովող միջոցառումներ

Նշված հինգ ոլորտները պետք է իրականացվեն, մինչ ձեր հաստատությունը մշակում է վերաբացման արձանագրություններ:

[1] 1 Լոս Անջելեսի Վարչաշրջանի կոդը, Title 22. §22.14.060 - F. Ընտանիքի սահմանումը. (Ord. 2019-0004 § 1, 2019.) https://library.municode.com/ca/los_angeles_county/codes/code_of_ordinances?nodeId=TIT22PLZO_DIV2DE_CH22.14DE_22.14.060F.

Կասեցված է՝ այլևս ակտիվ չէ

Սույն արձանագրությամբ սահմանված բոլոր բիզնեսները պետք է իրականացնեն ստորև նշված բոլոր կիրառելի միջոցառումները և պատրաստ լինեն բացատրելու, թե ինչու որևէ չիրականացված միջոցառում կիրառելի չէ իրենց բիզնեսի համար:

Բիզնեսի անվանումը՝ ______________________

Հաստատության հասցեն՝ ______________________

Հրապարակման ամսաթիվը՝ ______________________

Կասեցված է այլևս կիրառելի չէ

A. ԱՇԽԱՏԱՎԱՅՐՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԸ (ՆՇԵԼ ԱՅՆ ԲՈԼՈՐԸ, ՈՐՈՆՔ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ ԵՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆԸ)

- ❑ Բոլոր նրանց, ովքեր կարող են իրենց աշխատանքային պարտականությունները կատարել տնից, հանձնարարվել է վարվել այդպես:
- ❑ Անձնակազմի խոցելի անդամներին (65 տարեկանից բարձր և քրոնիկական հիվանդություններ ունեցող անձինք), հնարավորության դեպքում, հանձնարարվում է այնպիսի աշխատանք, որ կարելի է կատարել տնից:
- ❑ Բոլոր աշխատակիցներին հանձնարարվել է չներկայանալ աշխատանքի, եթե նրանք հիվանդ են և հետևել Հանրային Առողջապահության Վարչության ինքնամեկուսացման ուղեցույցին, եթե այն կիրառելի է:
  - ○ Ստեղծեք վերապատրաստված պահեստային աշխատակիցների ցուցակ:
  - ○ Աշխատակիցներին տրամադրվել է տեղեկատվություն գործատուի, կամ կառավարության կողմից հովանավորվող աշխատանքի չներկայանալու դեպքում նպաստներ ստանալու վերաբերյալ հնարավորությունը, ինչն էլ ֆինանսապես ավելի կհեշտացնի նրանց տանը մնալը: Տե՛ս հիվանդության կամ աշխատավայրում վնասվածքի դեպքում աշխատողին տրամադրվող բացակայության և COVID-19-ի համար աշխատողներին փոխհատուցման կառավարության աջակցման [ծրագրերը,](#) ներառյալ աշխատողների կողմից հիվանդության հիմքով արձակուրդ ստանալու իրավունքների վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններն անմիջապես [Ընտանիքների Կորոնավիրուսին Առաջին Արձագանքի Օրենքի ներքո](#), և աշխատակիցների համար փոխհատուցման վճարներ ստանալու իրավասության և COVID-19-ին առնչվող աշխատանքների մասին տեղեկությունները ըստ Նահանգապետի [N-62-20 Գործադիր Կարգի:](#)
- ❑ Տեղեկանալով որ մեկ կամ մի քանի աշխատակիցների թեստի արդյունքը դրական է, կամ նրանք ունեն COVID-19-ի ախտանիշների նման ախտանիշներ (հիվանդ են), գործատուն պետք է ունենա պատրաստի ծրագիր կամ արձանագրություն, որպեսզի «հիվանդ(ներ)ը» մեկուսանան տանը, ինչպես նաև պահանջի, որ բոլոր աշխատակիցները, որոնք աշխատավայրում շփվել են «հիվանդի» հետ, անմիջապես ինքնակարանտինի ենթարկվեն: Գործատուի ծրագիրը պետք է ներառի COVID-19-ի թեստավորման հասանելիությունը կարանտինի մեջ գտնվող բոլոր աշխատակիցների համար, որպեսզի պարզվի թե արդյոք աշխատավայրում եղել են շփման լրացուցիչ դեպքեր, հետևաբար

դրանք կարող են պահանջել COVID-19-ի վերահսկման լրացուցիչ միջոցառումներ:

- ❑ Եթե սեփականատերը, կառավարիչը, կամ օպերատորը աշխատավայրում 14 օրվա ընթացքում տեղեկանում է COVID-19-ի երեք (3) կամ ավելի դեպքերի մասին, ապա գործատուն պետք է այս դեպքերի մասին տեղեկացնի Յանրային Առողջապահության Վարչությանը՝ (888) 397-3993 կամ (213) 240-7821 հեռախոսահամարների միջոցով կամ առցանց՝ www.redcap.link/covidreport-ի միջոցով: Եթե աշխատավայրում հաստատվում է խմբակային վարակման դեպք, ապա Յանրային Առողջապահության Վարչությունը պետք է ձեռնարկի խմբակային դեպքի արձագանք, որը պետք է ներառի վարակի վերահսկման ուղեցույց և հանձնարարականներ, տեխնիկական աջակցություն և տեղանքին հատուկ վերահսկման միջոցառումներ: Կնշանակվի հանրային առողջապահության գործերի կառավարիչ խմբակային գործով ստուգումների իրականացման համար՝ օգնելու ուղղորդել հաստատության արձագանքը:
- ❑ Նախքան հաստատություն մուտք գործելը և զբաղմունքներին մասնակցելը՝ իրականացվում է մասնակիցների, մարզիչների և աջակցող անձնակազմի անդամների ախտանիշների ստուգում՝ համաձայն ԼԱ Շրջանի Յանրային Առողջապահության Վարչության (LACDPH) Աշխատակիցների Ախտանիշների Ստուգման ուղեցույցի: Ստուգումները պետք է ներառեն հազի, շնչարգելության և ջերմության կամ դողի ստուգում, ինչպես նաև հարցում արդյոք անհատը գտնվում է ընթացիկ մեկուսացման կամ կարանտինի հրամանների ներքո: Նշված ստուգումները կարող են իրականացվել անձնապես կամ այլընտրանքային մեթոդներով, ինչպես օրինակ՝ առցանց ստուգման համակարգերի, կամ հաստատության մուտքի մոտ տեղադրված պաստառի միջոցով, որի վրա նշվում է, թե ախտանիշներ ունեցող անձը չի կարող մուտք գործել տարածք:
  - ○ Եթե անձը չունի ախտանիշներ, տվյալ պահին նրան հրահանգված չէ կարանտին պահպանել կամ մեկուսանալ, և վերջին 14 օրերի ընթացքում շփում չի ունեցել COVID-19-ով վարակված կամ վարակմամբ կասկածվող անձի հետ, նրան կարելի է թույլ տալ մասնակցել այդ օրվան:
  - ○ Եթե անձը վերջին 10 օրերի ընթացքում շփվել է COVID-19-ով վարակված կամ վարակմամբ կասկածվող անձի հետ, կամ տվյալ պահին նրան հրահանգված է կարանտին պահպանել, նա չի կարող ներս մտնել և մասնակցել և պետք է անհապաղ ուղարկվի տուն՝ պահպանելու տանը կարանտին: Տրամադրեք նրան կարանտինի հրահանգները, որոնք կարելի է գտնել այստեղ՝ ph.lacounty.gov/covidquarantine.
  - ○ Եթե անձի մոտ դրսևորվում է վերևում թվարկված ախտանիշներից որևէ մեկը կամ տվյալ պահին նրան հրահանգված է մեկուսանալ, ապա նա չի կարող ներս մտնել և մասնակցել և պետք է անհապաղ ուղարկվի տուն՝ մեկուսանալու տանը: Տրամադրեք նրան մեկուսացման հրահանգները, որոնք կարելի է գտնել այստեղ՝ ph.lacounty.gov/covidisolation.
- ❑ Աշխատակիցներին, ովքեր շփում ունեն այլ անձանց հետ, անվճար առաջարկվում են դիմակներ, որը ծածկում է քիթն ու բերանը: Աշխատակիցը պետք է կրի դիմակը աշխատանքային օրվա ամբողջ ընթացքում, եթե շփվում է, կամ հավանական է, որ կունենա շփում այլ անձանց հետ: Այն աշխատակիցները, որոնց բժիշկը հանձնարարել է չկրել դիմակ, պետք է կրեն դեմքի վահան՝ ստորին հատվածը ծածկող շերտով՝ համապատասխան Նահանգային հրահանգներին, քանի դեռ իրենց առողջական վիճակը թույլ է տալիս: Նախընտրելի է դեմքի վահանի ստորին հատվածի շերտը ծածկի կզակը: Միակողմանի փականներով դիմակներ չպետք է օգտագործվեն:

Կասեցված է՝ այլևս կիրառելի չէ

- Բոլոր աշխատակիցները պետք է կրեն դիմակներ՝ բացառությամբ այն պահերի, երբ միայնակ աշխատում են անհատական գրասենյակներում, որոնց դռները փակ են, կամ երբ ուտում կամ խմում են: Նախկինում կատարված բացառությունը, որը վերաբերվում էր աշխատողների հասակը գերազանցող ամուր միջնապատերով խցիկներում աշխատող աշխատողներին, այլևս չի գործում:
- Դիմակների հետևողական և ճշգրիտ կիրառումն ապահովելու համար աշխատակիցներին չի խրախուսվում ուտել կամ խմել՝ բացառությամբ իրենց ընդմիջումների ժամերին, երբ նրանք կարող են անվտանգ կերպով հանել իրենց դիմակները և մյուսներից ֆիզիկական հեռավորություն պահպանել: Ուտելիս կամ խմելիս աշխատակիցները պետք է մյուսներից առնվազն վեց ոտնաչափ հեռավորություն պահպանեն: Նախընտրելի է ուտել կամ խմել դրսում և հնարավորության դեպքում մյուսներից հեռու: Խցիկում կամ աշխատավայրում ուտելը կամ խմելը ավելի նախընտրելի է, քան ընդմիջման սենյակում ուտելը, եթե խցիկում կամ աշխատավայրում ուտելը մյուսներից ավելի շատ հեռավորություն և միջնապատեր է տրամադրում:
- Զբաղվածությունը կրճատվում է, և աշխատողների միջև տարածությունն առավելագույնի է հասցվում ցանկացած սենյակում կամ տարածքում, որտեղ աշխատակիցներն օգտագործում են ճաշերի և/կամ ընդմիջումների համար: Այս պահանջին հնարավոր է հասնել հետևյալ կերպ.
    - Նշել առավելագույն զբաղվածությունը, որը համապատասխանում է ընդմիջումների համար օգտագործվող սենյակներում կամ տարածքներում առնվազն վեց ոտնաչափ հեռավորության ապահովմանը և
    - Փոփոխել ընդմիջումների կամ ճաշի ժամերը՝ նվազեցնելու զբաղվածության թիվը ճաշերի և ընդմիջումների համար օգտագործվող սենյակներում կամ տարածքներում, և
    - Սեղանները դնել ութ ոտնաչափ հեռավորության վրա և ապահովել նստատեղերի միջև վեց ոտնաչափ հեռավորությունը, նստատեղերը հեռացնել կամ ժապավեններ կպցնել՝ զբաղվածությունը նվազեցնելու համար, հատակների վրա գծանշումներ անել՝ հեռավորությունն ապահովելու համար, և նստատեղերը դասավորել այնպես, որ նվազագույնի հասցվի դեմ առ դեմ շփումը: Միջնապատերի օգտագործումը խրախուսվում է՝ տարածման հետագա կանխարգելման համար, բայց չպետք է համարվի զբաղվածության կրճատմանը և ֆիզիկական հեռավորության պահպանմանը փոխարինող միջոց:
- Աշխատակիցները պետք է ամեն օր լվանան կամ փոխեն իրենց դիմակները:
- Ջուրը մտնելիս աշխատակիցները կարող են չկրել դիմակներ:
- Ակտիվ փրկարարական աշխատանքով զբաղվող փրկարարներից նաև չի պահանջվում վերահսկել ձեռքերի լվացման կանոններին, օգտագործել դիմակներ, կամ այլ մարդկանցից պահել սոցիալական հեռավորություն:
    - Նշանակեք մեկ այլ աշխատակցի ֆիզիկական հեռավորության արձանագրությունների կիրառումը հսկելու համար: Բոլոր աշխատակիցները պետք է իմանան՝ ով է այդ աշխատակիցը և ինչպես կապվել այդ անձի հետ:
- Ախտահանիչ միջոցները և այլ հարակից պարագաները աշխատակիցների համար հասանելի են հետևյալ վայր(եր)ում՝

_____

- Ձեռքերի ախտահանման՝ COVID-19-ի դեմ արդյունավետ միջոցը բոլոր

Կանխագծագիր՝ անանուն չէ

աշխատակիցների համար հասանելի է հետևյալ վայր(եր)ում՝

____

- ❑ Աշխատակիցներին թույլատրվում է հաճախակի ընդմիջումներ վերցնել իրենց ձեռքերը լվանալու համար:
- ❑ Յուրաքանչյուր աշխատակցի տրամադրվել է այս արձանագրության կրկնօրինակը:
- ❑ Ընտրովի – Նկարագրել այլ միջոցառումներ՝

____

B. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- ❑ Բացօթյա լողավազանները կարող են բացվել առօրյա օգտագործման համար: Լողավազանի տարածքի օգտագործումը պետք է սահմանափակվի լողավազանի օգտագործման առավելագույնը 50%-ի չափով, և լողավազանից օգտվողները պետք է 6 ոտնաչափ ֆիզիկական հեռավորություն պահպանեն այն անձանցից, որոնք իրենց հետ չեն ապրում:
  - ○ Լողավազանի առավելագույն թույլատրելի կարողությունը. ______________ Լողավազանից օգտվողների առավելագույն 50% կարողությունը. ______________
  - ○ Քննարկեք լողավազանից օգտվելու համար ամրագրումների կիրառման հնարավորությունը: Սա կարող է ներառել ջրավազանի երկարությամբ գծերի ամրագրում՝ անհատական լողի համար:
  - ○ Երկարությունով լողացողներին հարկավոր է հիշեցնել, որ 6 ոտնաչափ հեռավորություն պահպանեն այն մարդկանցից, որոնց հետ իրենք չեն ապրում: Հնարավոր է, որ անհրաժեշտություն լինի որևէ ժամանակահատվածում սահմանափակել լողորդների թիվը, ովքեր ցանկանում են օգտագործել գծերը երկարությամբ լողալու համար, որպեսզի լողորդները կարողանան պահպանել անվտանգ հեռավորություն:
- ❑ Աշխատակիցները կարող են շարունակել օգտագործել լողավազանի հաստատության փակ տարածքները՝ զուգարանից օգտվելու, կամ ընդմիջումների համար, կարևոր աշխատանքային գործողություններ կատարելու և պարագաները ամեն օր հաստատությունից ներս ու դուրս տեղափոխելու համար:
- ❑ Լողավազանից օգտվող անձինք չեն կարող օգտվել լողավազանի փակ տարածքներից ցանկացած պահի, կամ ցանկացած պատճառով, բացառությամբ, եթե՝
  - ○ Անհրաժեշտաբար օգտվում են ներսի զուգարանից
  - ○ Մասնակցում են խեղդվելու կանխարգելման դասընթացին՝ հավաստագրված մարզիչի հետ այն պայմանով, որ դասընթացը պետք է սահմանափակվի միաժամանակ մեկ աշակերտով, կամ էլ բավականին փոքր խմբով, որպեսզի թույլ տա ջրի մեջ պահպանել ֆիզիկական հեռավորություն, կամ
  - ○ Հաճախում են ջրային բուժման դասընթացի՝ հավաստագրված մարզիչի հետ այն պայմանով, որ դասընթացը պետք է սահմանափակվի միաժամանակ մեկ հաճախորդով, կամ էլ բավականին փոքր խմբով, որպեսզի ապահովի ջրի մեջ պահպանել ֆիզիկական հեռավորություն:
- ❑ Հաճախորդները, ովքեր սպասում են ներսի զուգարանից օգտվելուն, պետք է սպասեն դրսում՝ մինչև զուգարանի ազատ լինելը: Աշխատակիցները պետք է վերահսկեն լողավազանի համալիրի փակ տարածքը՝ զուգարանի զբաղվածությունը սահմանափակելու և զուգարանից

Կասեցված է այլևս ուժի մեջ չէ

օգտվելու հերթում սպասող հաճախորդների միջև ֆիզիկական հեռավորություն ապահովելու համար:

- Չի թույլատրվում օգտվել ցնցուղներից, հանդերձարաններից և պահարաններից:
- Անհատական կամ բուժական դասընթացները թույլատրվում են՝ օգտագործելով սահմանված ֆիզիկական հեռավորության տեխնիկաներ: Ե՛վ աշակերտը, և՛ մարզիչը, կամ բժիշկ-թերապևտը պետք է մշտապես կրեն դիմակներ, երբ ջրում չեն գտնվում:
- Խմբակային դասընթացները թույլատրվում են այն պայմանով, որ պետք է սահմանափակվի խմբի չափը, որպեսզի բոլոր զբաղմունքների ընթացքում մասնակիցների միջև ապահովվի առնվազն վեց ոտնաչափ ֆիզիկական հեռավորություն: Ե՛վ մարզիչը և՝ բոլոր մասնակիցները պետք է մշտապես կրեն դիմակներ, երբ ջրում չեն գտնվում:
- Լողի մարզիչները պետք է դասը վարեն լողավազանի տախտակամածի վրայից: Այն դասընթացների համար, որոնք պահանջում են դեմ առ դեմ դասերտ շփում, խորհուրդ տվեք երեխայի հետ ջրում ներկա գտնվի իր ծնողը, կամ նույն ընտանիքի անդամը: Լողի խմբակային դասընթացի մասնակիցները և լողավազանի տախտակամածին կանգնած դիտորդները պետք է պահպանեն վեց ոտնաչափ ֆիզիկական հեռավորություն:
- Նշանակեք աշխատակից կամ աշխատակիցներ, և/կամ անձեր պատասխանատու կլինի/կլինեն հետևելու և համոզվելու, որ լողավազանից օգտվողների առավելագույն թիվը՝ 50 %-ի չափով, չի գերազանցում վերը սահմանված թվին: Նշանակված անձը/անձինք պատասխանատու է/են ամենօրյա ռեժիմով հետևելու այս արձանագրությունների պահպանմանը:
- Իրականացվել են ֆիզիկական հեռավորության (անհատները առնվազն 6 ոտնաչափ հեռավորություն են պահպանում այն անձանցից, որոնք իրենց տան անդամ չեն) ապահովման միջոցառումներ:
    - Տախտակամածի դասավորությունը և լողավազանը շրջապատող այլ տարածքներն այնպես փոփոխեք, որպեսզի կանգնելու և նստելու տարածքները թույլ տան պահպանել ֆիզիկական հեռավորության պահանջները՝ պահպանելով միաժամանակ լողավազանի շրջիջը տախտակամածից 4 ոտնաչափ դատարկ տարածություն, ինչպես պահանջվում է Նահանգային Օրենքով: Սա կարող է ներառել աթոռների հեռացումը տարածքից, կամ այն տարածքների ժապավենով եզրագծումը, որոնք խորհուրդ չի տրվում օգտագործել:
    - Տեղադրելով ֆիզիկական ցուցանակներ կամ ուղենիշներ (օրինակ՝ ջրավազանի նիստում գծեր, աթոռներ և սեղաններ տախտակամածի վրա), տեսողական ցուցանակներ (օրինակ՝ ժապավեններ տախտակամածների վրա, հատակներին կամ մայթերին) և նշաններ՝ համոզվելու համար, որ հյուրերն ու լողորդները միմյանցից առնվազն 6 ոտնաչափ հեռավորություն են պահպանում և՛ ջրում, և՛ ջրից դուրս:
- Թիմերի միջև մրցումները, որոնք սահմանվում են որպես մրցույթ միայն երկու թիմերի միջև, թույլատրվում են՝ համաձայն LACDPH Պատանիների և Մեծահասակների Ժամանցային Սպորտի Արձանագրության: Թիմը սահմանվում է՝ որպես խաղացողների խումբ, որը կազմում է մրցակցային խաղի կամ սպորտի մեկ կողմը:
- Խնջույքներն ու հավաքույթները արգելված են ընդհանուր օգտագործման բոլոր տարածքներում, ներառյալ՝ լողավազանում:

Կատարված է՝ այլևս կիրառելի չէ

C. ՎԱՐԱԿԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- ❑ Լողավազան ժամանող այցելուներին պետք է հիշեցնել, որպեսզի նրանք կրեն դիմակներ լողավազանի տարածքում գտնվելու ամբողջ ընթացքում (բացառությամբ՝ ջրում գտնվելիս): Սա վերաբերվում է ինչպես բոլոր մեծահասակներին, այնպես էլ 2 տարեկան և բարձր երեխաներին: Անձինք, որոնց իրենց բժիշկը հանձնարարել է չկրել դիմակ, պետք է կրեն դեմքի վահան՝ ստորին հատվածում ամրացված կտորով՝ համապատասխան Նահանգային հրահանգների, եթե նրանց առողջական վիճակը թույլ է տալիս: Նախընտրելի է կզակը ծածկող կտորով դեմքի վահանը: Միակողմանի փականներով վահաններ չպետք է օգտագործվեն: Ձեր աշխատակիցների և այցելուների անվտանգությունը ապահովելու համար դիմակները պետք է հասանելի լինեն այն այցելուների համար, ովքեր առանց դիմակի են եկել:
- ❑ Նախքան հաստատություն մուտք գործելը և զբաղմունքներին մասնակցելը՝ այցելուները պետք է անցնեն ախտանիշների ստուգում: Ստուգումները պետք է ներառեն հազի, շնչարգելության և ջերմության կամ դողի ստուգում, ինչպես նաև պարզաբանում, թե արդյոք անձը տվյալ պահին գտնվում է մեկուսացման կամ կարանտինի հրամանների ներքո: Նշված ստուգումները կարող են իրականացվել հեռակա, կամ այլ տարբերակներով՝ ինչպիսիք են համակարգում առանց ստուգման տարբերակը, կամ տարածքի մուտքի մոտ տեղադրված այն ցուցանակի միջոցով, որը հիշեցնում է այցելուներին տարածք մուտք չգործել, եթե կոնկրետ ախտանշաններ ունեն, կամ տվյալ պահին նրանց հրահանգված է մեկուսացում կամ կարանտին պահպանել:
- ❑ Իրականացրեք լողավազանի անվտանգության ստուգում համոզվելու համար, որ լողավազանի ջրի քիմիական բաղադրությունը համապատասխանում է ախտահանման կանոններին, և որ լողավազանը գնահատվել է անվտանգ սարքավորումների համար:
  - Պատշաճ շահագործումն ու սպասարկումը կոչնչացնի վիրուսը ջրի մեջ:
  - Խորհրդակցեք ջրային լողավազանը նախագծած ընկերության կամ ինժեների հետ որոշելու համար, թե Շրջակա Միջավայրի Պաշտպանության կողմից հաստատված ցուցակի որ ախտահանիչներն են առավել հարմար ջրավազանի համար:
- ❑ Այն հաստատությունները, որոնք չեն շահագործվել, անհրաժեշտ է տաք և սառը ջրի ծորակներից լողավազան հինգ րոպե ջուր հոսեցնել՝ փոխարինելու հաստատության խողովակներում հին ջուրը թարմ և անվտանգ ջրով:
- ❑ Իրականացրեք հաճախակի շոշափվող մակերեսների և ընդհանուր օգտագործման առարկաների մաքրման և ախտահանման ծրագիր՝ յուրաքանչյուր օգտագործումից առաջ: Օգտագործեք Շրջակա Միջավայրի Պաշտպանության Գործակալության կողմից հաստատված ախտահանիչ միջոց: Հետևյալ առարկաները պետք է ամեն ժամ մաքրվեն և ախտահանվեն հետևյալ ժամանակացույցով.
  - Բազրիքներ և սահելու կիսախողովակներ՝_____
  - Հանգստի սենյակի աթոռներ, սեղանների մակերեսներ՝ _____
  - Դռների բռնակներ և պետքարանի մակերեսներ, ձեռքերի լվացման կետեր, երեխաների տակդիրները փոխելու համար նախատեսված կայաններ և ցնցուղներ՝ _____
  - Քիքբորդեր և լողավազանային խողովակներ՝_____
  - Ընդհանուր օգտագործման հարմարանքներ _____

Կանգնած է անվանման չէ

- Պետքարաններ և ցնցուղներ՝ _____
- Այլ մակերեսներ _____

- ❑ Մշտապես ապահովեք համապատասխան պարագաներ առողջ հիգիենայի պահպանման համար: Պարագաները ներառում են՝ օճառ, առնվազն 60% սպիրտ պարունակող ձեռքերի ախտահանիչ միջոցներ, թղթե սրբիչներ, անձեռոցիկներ և աղբամաններ
- ❑ Ստեղծեք այնպիսի համակարգ, որ կահույքը (օրինակ՝ հանգստի սենյակի աթոռները), կամ ընդհանուր օգտագործման այլ առարկաները, որոնք պետք է մաքրվեն և ախտահանվեն, առանձին պահվեն արդեն իսկ մաքրված և ախտահանված կահույքից, կամ ընդհանուր օգտագործման այլ առարկաներից:
  - Համոզվեք, որ կահույքը, սարքավորումները, սրբիչները մինչ օգտագործումը պաշտպանված են աղտոտվելուց:
- ❑ Խմելու ցայտաղբյուրները ծածկված են օգտագործումը կասեցնելու համար:
- ❑ Խրախուսեք լողավազանից օգտվողներին հնարավորը չօգտագործել տարբեր իրեր, հատկապես այնպիսի իրեր, որոնք դժվար է մաքրել և ախտահանել, կամ էլ այնպիսիք, որոնց օգտագործումը ունի դեմքի հետ շփում (օրինակ՝ ակնոցներ, քթի սեղմիչներ և շնչադիմակներ):
- ❑ Համոզվեք, որ հաստատությունը ունի բավարար սարքավորումներ, օրինակ՝ քիքբորդեր, լողալու ձողեր և լողալու համար այլ հարմարանքներ, հնարավորության դեպքում նվազագույնի հասցնելու համար իրերի համատեղ օգտագործումը: Սահմանափակեք միաժամանակյա օգտագործումը միայն մեկ անձով տվյալ պահին, և յուրաքանչյուր օգտագործումից հետո մաքրեք և ախտահանեք իրերը:
- ❑ Անհատներին խորհուրդ է տրվում լողավազան բերել իրենց անձնական սրբիչները և համատեղ չօգտագործել դրանք իրենց տան անդամ չհանդիսացող մարդկանց հետ:
- ❑ Սրբիչները պետք է վանալ ըստ արտադրողի ցուցումների: Լվանալիս օգտագործեք թույլատրելի ամենաշատ ջրի ջերմաստիճանը և ամբողջովին այն չորացրեք:
- ❑ Համոզվեք, որ հիվանդարանքներում օդափոխության համակարգերը պատշաճ կերպով աշխատում են: Հնարավոր առավելագույն չափով ավելացրեք օդափոխությունը:
  - Ցանկալի է բարձր արդյունավետության օդը մաքրող շարժական սարքեր տեղադրել, շենքերի օդի ֆիլտրերը հնարավորինս բարձր արդյունավետության հասցնել և այլ փոփոխություններ կատարել՝աշխատանքային բոլոր վայրերում դրսի օդի և օդափոխության քանակն ապահովելու համար:

D. ՀԱՆՐՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- ❑ Այս արձանագրության կրկնօրինակը տեղադրված է լողավազանի բոլոր հանրային մուտքերի մոտ:
- ❑ Լողավազանի յուրաքանչյուր հանրային մուտքի մոտ տեղադրված են ցուցանակներ, որոնք լողավազանից օգտվողներին տեղեկացնում են.
  - Մնալ տանը, եթե հիվանդ են կամ ունեն COVID-19-ի հետ համընկնող ախտանշաններ կամ, եթե այդ պահին նրանց հրահանգված է մեկուսանալ կամ կարանտին պահպանել:

Կասեցված է այլևս գործուն չէ

- Հնարավորության սահմաններում վեց ոտնաչափ ֆիզիկական հեռավորություն պահպանել այն մարդկանցից, որոնք ձեր տան անդամները չեն, և լողավազանում չընդգրկվել ավելորդ ֆիզիկական շփման մեջ:
- Լողավազանի հաստատություն մտնելուն պես հաճախակի լվանալ ձեռքերը, կամ օգտագործել ախտահանիչ միջոց:
- Կրել դիմակ հաստատության ընդհանուր օգտագործման տարածքներում տեղաշարժվելիս, ներառյալ դեպի լողավազան գնալիս և լողավազանից դուրս գալուց հետո , ինչպես նաև համատեղ օգտագործման պետքարաններում: Հիշեցրեք լողորդներին ջուրը մտնելիս հանել իրենց դիմակները:

E. ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՆԱՉԱՌ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- ❑ Առաջնահերթություն է տրվել հաճախորդների/բնակիչների համար կարևոր ծառայություններին:
- ❑ Ձեռնարկվում են միջոցառումներ՝ ապահովելու ապրանքների և ծառայությունների հասանելիություն այն հաճախորդներին, որոնք ունեն տեղաշարժման սահմանափակ հնարավորություն և/կամ հանրային տարածքներում գտնվում են բարձր ռիսկի տակ:

Դուք կարող եք նաև սոցիալական հեռավորության և հարմարանքների/մակերեսների ախտահանման ընթացակարգերի մասին ցուցումներ ստանալ Հիվանդությունների Կառավարման և Կանխարգելման Կենտրոնների կողմից օգտագործելով հետևյալ կայքը՝ https://www.cdc.gov/coronavirus/2019-ncov/community/parks-rec/aquatic-venues.html#anchor1589978994218:

Կասեցված է այլևս արդիական չէ